


ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "

ԿԱՆԽԻԿ



ՊԵՅՄԱՆՔ

Գրութիւնք ետ
չեն տրուիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ

ՕԿՏՈՍՈՍ 19 ՇԱԲԱԹ 1900

ԹԻԻ 175

Ներկայ թուով Հայեղի իր Գրդ տարւոյ Ա. վեցամսեան կ'ամբողջացնէ. ուստի կը խնդրուի արտասահմանի կարգ մը բաժանորդներէն որ բահահածին այլ ևս իրենց բաժանելինը զճարել:

Ի ՆՁ ԸՆԵՆ ՄԻ...

(Շար. անցեալ թիւէն)

Հայրենիքի սրտին վրայ բայցաւամբ ամեն վէրք ու պալար, կտրիճներու երակէն հոսած ամեն արեան վտակներ սնունդն էին խաչագողին, որ աս ու ան քաղաքի մէջ ծախու հանելով ամեն մէկ նոր զժառանգութեան գոյժ, կեղծաւոր արցունքներով կ'ապաստանէր ժողովուրդին ալիքահատանացը և նիհար ըլլալ թէ պարարտ, միշտ տըղրուկի պէս կը փակէր անոր:

«Տեսէ՛ք, այս ինչ տեղը թուրքերը նորէն շարդեն կոր. դրամ տուէք որ զինենք մեր եղբայրները և պատրաստենք զոսոնք նոյնանման աղէտներու վերակրկնումին հանդէպ»:

Խեղճ ժողովուրդ՝ այս մորմոքիչ կոչին առջև, նորէն կը բանար իր նիհար քսակը և լիապէս կը վարձատրէր կոկորդիլոսի արցունքները: Եւ այսպէս քանի մեր աղէտներու շարքը կ'երկարէր, այնքան ալ կը բազմապատկուէր խաչագողութիւնը և կ'ստանար ահագին ծաւալ մը, մինչև որ խաչագողութիւնը՝ ալ միևնադէպ մը անթեքութեամբ կը ցցուէր ամեն ուրեք և աչք ծակող աղտոտութիւններով անպարտկելի կը մնար: Մէյ մը այս ինչ տեղէն, մէյ մըն ալ այն ինչ տեղէն կուգային կը խուժէին աւազակութեան տխուր արձագանքներ, որոց ճարպիկ ձևերն ու այլադանութիւնը կարող էին նախանձը շարժել նոյն իսկ Պուլկարեան օրիկաներուն և Գալուրի փառքը նըսեմացնել, անոր յախտենական քունին մէջ:

Եւ սակայն յեղափոխական պաշտօնական մարմիններ կարծես բամպակ թխած էին իրենց աւանջները չը լսելու համար յանուն իրենց եղած այս բոլոր զեղծումները, զորս՝ ինչպէս ըսինք, այլ եւս կարելի չէր պարտկել:

Ներկայ յոգուած իս շարքին մէջ ըսած ենք արդէն թէ 1895ին խաչագողութիւնը պաշտօնական համազգեստով կը ներկայանար բեմին վրայ, ռիւքպէի ռեզսպէի հասած էր ան: Թող ներուի մեզ որ դատապարտութեան այս սոսկալի խարակը կը զարնեմ ան օրուան հետոսնետուն ճակատին: Այս թուականներուն՝ երբ ժողովրդեան ցաւը և ասոր անմիջական հետեանքն եղող յեղ. շարժումներու խանգաւառութիւն մեծ համեմատութեան մը հասած էին, օրուան տիրող կուսակցութիւնը՝ ինչպէս գիտէ ամեն ոք, Հնչակեանութիւնն էր. անիկա Պոլիս եւ ամեն ուրեք իտէալն էր Հայ ժողովուրդին, ու պատրաստ էր ոչ միայն ունեցածն ու չունեցածը անոր տրամադրութեան տակ դընելու, այլ և իր արիւնն իսկ չը խնայելու հիանալի գիւցաղութեամբ մը: Գործնական չքնաղ օրինակներ կուգային ամեն օր հաստատելու թէ Հայը ճանչցուածին պէս լալկան ժողովուրդ մը չէ. անիկա գիտէ նաեւ ի հարկին ազգային զոհաբերութեան սեղանը իր արիւնով ներկել և աշխարհի հիացմանն արժանանալ:

Այլ աւա՛ղ, որ խաչագողութիւնը՝ աղուէսի ճարպիկութեամբ ներս սպրդած և պաշտօնական սեղանին գլուխն անցնելով, սկսած էր արեան նախճիրներու մէջ խոթել իր աղտոտ քիթը և ի տես արիւնալի խառնաչփութեանց ցատկել ու ցատկաւել թալանող քուրդի մը վայրագ հըրճուանքովը: Անկէ կը տրուէր նոր ցոյցեր սարքելու հրամանը և անգղները անկէ կը նետուէին դիակներուն վրայ:

Յոյց սարքել՝ ան տտեն, ինչպէս անկեղծ յե-

զափոխականին, նոյնպէս և խաչագողին համար շատ նպատակայարմար էր: Առաջինը ազգին ծառայած ըլլալու միամիտ համոզումը, իսկ երկրորդը՝ այդ կերպով, ուղղակի իր անձնական անորակելի հաճոյքներուն գոհացում տուած ըլլալու հաստատ հաւատքը ունէր. և այս երկուքը՝ անկեղծն ու խաչագողը՝ ամսո՞ս, որ պաշտօնական միւսնոյն աթոռները կը դրաւէին և երբէք անհամաձայն չէին գտնուէր ու և է գործի մէջ: Մէկը միւսին արձագանքն եղած էր. մէկը անհաշիւ, իսկ միւսը իր ճիւղաղային հաշիւներուն համար ձեռք առած աղբին ճակատագիրը, ուղած կերպովներն կը վարէին զայն, հինգդարեան գերութեան մը շղթան կոտորելու նկրտող ժողովուրդին անհաշիւ խանդավառութենէն օգտուելով: Օրերը հունձքի օրեր էին և խաչագողին մանգաղը պաշտօնապէս կը հնձէր առատ հունձք ու բարիք, բացարձակապէս անպատասխանատու դրութեամբ մը:

Իրամը ամեն գործի ջիղն է և խաչագողերուն միակ փափագն էր՝ ըլլայ համոզմամբ ըլլայ գանակի ուժով դրամ ունենալ և շատ ունենալ. որպէս զի... սօխաղիի աղջկան զարդն ու զարդարանքը պակաս չըլլայ և վաղանցիկ կեանքի մը բոլոր հաճոյքները վայելեն իշխանական ճոխութեամբ:

Ահա աղուէսի ճարպիկութեամբ պահուրտողները՝ որ 1895ին մեր յեղափոխական վարիչներուն ամենէն եռանդունը և ամենէն աւելի նուիրուածը ցոյց կուտային ինքզինքնին: Իրենք էին որ զէնքի համար է, ըսին, դրամ հաւաքեցին ու իրենք կ'լլեցին. Ձէյթունի համար է, ըսին, դրամ հաւաքեցին ու իրենք կ'լլեցին. վրտանդուած յեղափոխականները տեղէ տեղ փախցնելու համար է ըսին, դրամ հաւաքեցին ու իրենք կ'լլեցին և քիթերնին ու բերաննին լցուրտ տելով, թալանով ծանրաբեռն, ելան դացին եւրոպական հրապարակներ, քիչ մըն ալ հոն մխելու ժողովուրդին արժնովը շաղախուած կողոպուտը:

Ինչ անխիղճ հեղեղութիւն:

Անցան օրեր և Հնչակեաններն սկսեցին պառակտիլ իրարու մէջ. կեդրոնը՝ իր մասնաճիւղը և մասնաճիւղն ալ՝ իր կեդրոնը տալապեց. դրամական զեղծումներու համար մէկը միւսը ամբաստանեց և ամեն ինչ լմնացաւ: Զեղծմանց բուն հեղինակները անծանօթ մնացին ժողովուրդին եւ ատոնք տարիներու երկար շարքի մը մէջ եւրոպական Պուլվարներու վրայ շէնք շնորհք ծամեցին իրենց կողոպուած դրամները անպատիժ կերպով, Իրաց այս վիճակին մէջ ամենէն աւելի սոսկալին այն էր որ կուսակցութիւնը որուն կը պատկանին իրենք, և որուն մինչև այսօր բարեկամ մնացած են, դոնէ պաշտօնապէս չարտաքսեց իր մէջէն, այլ ընդ-

հակառակը գիտնալով հանդերձ անոնց ամեն աղտոտութիւնները, ջանաց մինչեւ վերջին վայրկեանը բարեկամութիւննին շահիլ եւ իր ծոցին մէջ պահել զանոնք իբրեւ խորհրդատու գործիչներ:

Շատ պատճառներ ունինք հաւատալու որ քանի մը ամսոյ շափ առաջ Պոլսոյ մէջ բռնի դրամ հաւաքելու փորձը պաշտօնական Մարտականներու կողմէն եղած չէր, այլ նոյն այդ խաչագողներու կողմէն, որ քանի մը յայտնի լրտեսներու հետ ալ որոշ յարաբերութեան մէջ գըտնուելով, իրենց համար դիւրին էր թուրք ստանին մէջ դրամ հաւաքելու ծրագիր մը իրականացնել յանուն նոր Հնչակեաններու, եւ շատ կարելի է որ մէկ երկու հարիւր ոսկի ալ կրցին շորթել...

Հիմա, երբ մտածենք թէ այս ամեն առաջակութիւն որ հէգ ժողովուրդը փրկելու պատրուակին տակ կը գործուին, եղած, ճշդուած ու հաստատուած իրողութիւններ են, և թէ այս ամենը ինձմէ քեզմէ շատ աշէկ գիտէ վարիչ մարմինը ու գիտնալով հանդերձ ոչ մի տնօրէնութիւն չըներ անոնց նշանմամբ, այլ ընդհակառակը կը փայփայէ միշտ զանոնք, ինչ անուն պէտք է տանք այն լուիկ համակերպութեան, զոր ցոյց կուտայ իրենց պաշտօնական օւկանը ծնած օրէն ի վեր, անկէ առաջ եւ վերջ իր շուրջը պատահած բոլոր քառամեկի զեղծումներուն հանդէպ: (*)

(Շարունակելի)

ԾԱՆՕԹ

(*) Անկեղծութեան պարտք մըն է ըսել թէ այդ վարիչ մարմինն մէջ կան այնպիսիներ, որոց պարկեշտութիւնն ու հայրենասիրութիւնը ամեն կասկածանքէ վեր է և մենք ծիշտ ատոր համար աւելի շուտրած ենք ու չենք կրնար մեկնութիւն մը տալ պատճառ լուծեանը:

Ծ.

ԱՉԳԱՅԻՔ

Բարիզէն մեկ կը գրեն թէ, օգոստ. 18 (ը. ե.) չաբաթ օրը մեծ հանդիսիւ կատարուեր է Արուեստահանդէսին ցուցադրողներու մրցանակաբաշխութիւնը: Առ այժմ երեք Հայերու անուններ յայտնի են. Պ. Զաքարեան (նկարիչ) ոսկի մէտալլ. Պ. Շահինեան (փորագրիչ) ոսկի մէտալլ և Պ. Արամ Թահթաճեան (ճարտարագէտ) պղինձ մէտալլ, որ Գեղարուեստից մեծ պալատին մէջ ցուցադրած էր Հայ Եկեղեցւոյ մը պատկերը և յատակադիծը: Պ. Թահթաճեան՝ դարձեալ Ար-

ուեստահանդէսին մէջ ուրիշ պղինձ մէտայլ մ'ալ առած է, իր հնարած մէկ փոքրիկ մեքենային համար: Մեր շնորհաւորութիւնները արդ երեք հայերուն:

Մրցանակաբաշխութեան առթիւ ամբողջ Բարիկ լուսոյ քաղաք մը դարձեր և Արուեստահանդէսին մէջ հրախաղութիւնք տեղի ունեցեր են. չորս հարիւր հազար հոգիէ աւելի ժողովուրդ սոյն խըրախճանութեան մէջ այնպէս թաղուեր են որ, նոյն գիշերը պատահած արկածի մը զոհ գացող 29 թշուառներուն (որոց երեքը մեռած) և այդ կողմը դռնուող հազարաւոր ժողովրդեան հանած վայնասունը մազի չափ ազդեցութիւն չէ ըրեր անոնց վրայ, այնպէս որ շատեր հետեւեալ օրը լրացիրներէն խնայեր են պատահած ազէտքը, որուն պատճառը փայտաշէն կամրջակի մը յանկարծ փլչելն եղած է:

—Վեհ. Հայրապետին հրահանաւ յուլիս 23ին Ռուսաստանի բոլոր Հայ եկեղեցիներուն մէջ հոգեհանգստեան պաշտօն կատարուեր է բարեօրհան տակ Գ. Զանչեանցի հոգուն:

—Պոսոյ պետական խորհրդոյ անդամ Սահակ Ապրո էֆ. օգոստ. 9 չորեքշաբթի գիշեր մեռեր է:

—Բնիկ Ակնցի ատամնաբոյժ Ալիքսան Թանտրճեան անուն ազգային մը, որ ինը տարիներէ ի վեր ընտանեօքը Թիֆլիզ հաստատուած էր, այս անգամ յաջողեր է թեւաւոր նորածն շողենաւ և վէրսիւրէտ շոգեկառք մը հնարել, որոց փորձերը յաջողապէս կատարուեր են: Կըսուի թէ Թիֆլիզցի կարգ մը հարուստ հայեր պիտի աջակցին անոր:

—Կարսէն կը գրեն թէ, «Խուս ոտտիկանութիւնը սպարիլ 15ին Կազդուանի շրջականները քաղաքի մը մէջ հրացանի և փամփուշտի մթերք մը երկան հանեց, զոր անշուշտ հայ յեղափոխականներ փոխադրած էին հոն: Պիւղարնակ թուրքեր՝ երկու հայ մատնիչներէ լուր առնելով խնայ տըւած էին ռուս ոտտիկանութեան»:

—Ի նպատակ տեղւոյս ազգ. վարժարանաց կազմուած ձեռագործերու վիճակահանութիւնը որ տեղի պիտի ունենար ամսոյս 15ին, յետաձգուած է հսկա. 15ի, տոմսակներուն ամբողջովին ծախուած չըլլալուն պատճառաւ:

ԱՄԻՐԻԱՆԵԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

Պատուելի Ամիրխանեանցի երկուսու վարժարանը յաւաքիկայ Սեպտ. 3 երկուշաբթի օրը պիտի բացուի: Ուստի իրենց զաւակները խրկել ուղղ ծնողք պէտք է ժամանակին ներկայանան, ընդունելութեան պայմանները հասկնալու համար:

ԲԱՆՔ ԽԱՉԱԳՈՂԱԿԱՆ

«ԾԱՐՈՒՆԱԿԵՆՔ...»

Խաչագործութեանց համար եղած բողոքներուն ու դիտողութիւններուն կարեորութիւն չը տալով, մենք մեր խելըդղըլըռը շարունակե՛նք:

Ժողովուրդի արդար ձայնին հակառակ՝ սըրճարանները ու խանութները այցելելով, միամիտ մարդիկը համոզելն ենք իս շարունակե՛նք:

Մեր յանցանքը երեսնուս զարնող զօրաւոր սօգիւմէնտները ու փաստերը առ ոչինչ համարելով, սա բռնած չարքը իս ճամբանիս շարունակե՛նք:

Ս. անունի մը կրկնած, զէնք ու մարդ պիտի ղրկենք ըսելով խեղճ պաւառացիներէն դրամ հաւաքելնիս ու ետեւի փողոցէն զամբիւնոս ընելնիս շարունակե՛նք:

Մեր դիմակը վար առնողներուն՝ մատնիչ, դաւաճան, հակայեղափոխական ու վատ մակդիրները տալով առանց ամչնալու հրապարակին մէջ պտըտելնիս շարունակե՛նք:

Մեր ընկերներէ մէկուն կամ մէկ քանին ըրած յայտնի զեղծումները եսնա՞մ զայրեթիով պաշտպանելնիս շարունակե՛նք:

Ժողովուրդին աչքին թօշ փչելով, ա՛նկէ դըրամ քաշելու համար քանի մը միամիտներ համոզելով հայրենիքի մէջ 5-10 քիւրտեր սպաննելու և անոր փոխարէն 2-300 հայոց սպանմանը պատճառ ըլլալու քաղաքականութիւննիս շարունակե՛նք:

Վերջապէս, քանի որ մեր պաշտպանածը մեզ համար հայի խնդիր մ'է, անօթի չի մնալու համար գիշեր ու ցօրէկ մեր շահատակութիւնները շարունակելով շարունակե՛նք:

ԶՈՒԹԱԿ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ Յ. Կ. ՊՕՆՃՈՒՔԵԱՆԻ

Նոր Ընթերցարան

Բ. ՏԱՐԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Գինն է 1 ֆրանք. գոնէ 20 օրինակ գնողներու համար 15 0 | 0 շնորհ:

Հասցէ Ե. Կ. Պոնճուքեան

Վառնա

ԵՐԿԱՐ ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԱՆԿՈՒՑԻ ԽՐԱՏՆԵՐ

Կեանքը հիւանդութիւն մըն է որ կը մեռցնէ, ըսած է զուարճախօս հեղինակ մը: Մարդիկ կը բաղձան որ այս հիւանդութեան վերջը կարելի եղածին չափ ուշ հասնի, բայց միւս կողմէն ալ ամէն կերպով կ'աշխատին այս վիրջը փութացնելու համար: Ապրելու մասին ամենօրեայ զեղծումները, չարաչար յոգնութիւնները մարդուն կեանքը կը կարճեցնեն: Շատ քիչեր ծերութենէ կը մեռնին, կըսէ ֆլուրանս, իսկ մեծ մասը հիւանդութենէ: Մարդս երկար ապրելու համար պէտք է սակաւակեր ըլլայ: Տօքթ. Սկելեսպին կըսէ թէ սակաւակերութեամբ մարդս չը հիւանդանար, վասն զի շատ հիւանդութիւններ անմարսողութենէ կը ծագին, ու անմարսողութիւնն ալ չափազանց ուտելէ առաջ կուգայ, որ թէ՛ առողջութեան կը վնասէ և թէ քսակին: Երբ բժիշկը հիւանդի մը կը կանչուի, առաջին հասկնալու գործը՝ հիւանդին ինչ կերած ըլլալն է, և իրեն տալիք Ա. դեղը կըլլայ ըստամոքսը պարպել կամ մաքրել: Լուի Գօրնատօ անուամբ իտալացի մը որ 100 տարեկան մեռաւ 1566ին՝ գիրք մը ձգած է Սակաւակեր կեանք անուամբ, որուն մէջ երկար խրատներ տուած է ամէն անոնց՝ որք կուրծի իրեն չափ ապրել: Ինք՝ մինչեւ 35 տարեկան եղած տենէ՝ այնչափ ցոյի կեանք մը վարած էր որ բժիշկները կըսէին թէ ալ երկու տարիէն աւելի չկրնար ապրիլ: Գօրնատօ վախճաւ և իր բոլոր սովորութիւնները փոխելով սկսաւ ժուժկալ ապրիլ: Վաշխատիմ՝ կըսէր թէ շատ ցուրտէ և թէ շատ տաքէ ալ ինքզինքս պահել, բուն մարդանքներ չեմ ըներ, անքուն չեմ մնար... չեմ կենար նաև այն տեղերն ուր օդն ապականուած է, և միշտ հոգ կը տանիմ ո՛չ սաստիկ հոգին դէմ կենալ և ո՛չ չափազանց արեւուն դէմ:

«Ապրիլը իմ հրաշքս» է, կըսէր Ալլթէր: Ֆօնթընէլ և Ալլթէր երկու երեւելի օրինակներ են թէ որչափ կրնայ տեւել «առողջութիւն» մը՝ երբ լաւ կը կառավարուի: Շքովէօյլ կըսէ թէ իր երկար ապրելուն պատճառն իր սակաւակերութիւնն է: Գինի և ոգիւից ըմպելիք բնաւ չէր գործածեր և խոր ծերութեան հասաւ:

Տօքթ. Ա. Գիննէր ալ երկար ապրելու համար գիտական միջոց մը կը սովորեցնէ: Մարդս իր շնչերակներով կապրի կըսէ, ուրեմն բոլոր գաղտնիքը կը կայանայ շնչերակներն արգիլելու որ չը ծերանան: Արդէն գիտենք որ սրտի շնչերակներու մէջ կրային աղբը կը գոյանան, որք արեան շրջանն և հետեւեալ սնունդն ալ կարգիլեն, որով ամէն պաշտօններն ալ կը գազրին, ուստի մարդս՝ որչափ տարիքն առնու, այնչափ ալ պէտք է աշխատի որ իր կազմութեան մէջ մտած կրային աղբը նուազեցնէ: Ասոր համար պէտք է քիչ հաց ուտել, կոփու կամ ոչխարի միս բնաւ չուտել, այլ առատ պտուղ, ձուկ, հաւ, հորթի և գառնուկի միս ուտել, զտուած

ջուր խմել, մէն մի գաւաթին 10—15 կաթիլ ֆօսֆօրային թթու խառնելով, ոսկորներու կրային դէղերն արգիլելու համար: Ընթերցողն ազատ է այս կտորէն ուզածին հետեւելու: Բայց բուն հիմը սակաւակեաց ըլլալն է:

Հիմա, սիրելի ընթերցող, կ'ուզես հասկնալ թէ բանի՞ տարի պիտի ապրիս: Մի կարծեր թէ Պօսթօր Լէվիի կամ գնչուհիի գուշակութիւնը պիտի ընեմ, այլ Մուսկօրի կանոնին պիտի հետեւիմ: 86 թիւն հիմ բունէ, 12 տարեկանէն վեր ինչ տարիք որ ունիս այս 86 թիւէն իջեցուր, մնացած թիւն երկուքով բաժնէ, ինչ թիւ որ ելնէ, այնչափ տարի ևս պիտի ապրիս: Կը մայլածմ որ այս կանոնը սուտ ելնէ, և ինչ որ ծերունիս գոռնատուն իր գիրքին վերջն ըսած է, ևս ալ պիտի կրկնեմ. «Ապրէ՛, երկար ապրէ՛»:

ՉԻՆԱՑԻՆԵՐՈՒՆ

ՏԱՐՈՐԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Չինացիներէք չի մերժեր ու է խնդրանք, առաջարկ: Տալիք պատասխանը միշտ կը ձգձգէ: Ամենին աւելի զարմանալին սա է թէ Չինացին՝ երեւութապէս ջղայնութիւն չունի, ժամանակին վրայ գաղափար կամ գիտակցութիւն չունի, այնպէս որ ժամօրով միեւնոյն դիրքին մէջ կը կենայ անշարժ կամ ընդհակառակը ու է աշխատութիւն կը կատարէ անգաղափար: Չինացի մը կրնայ ամբողջ օր մը գրելով անցնել առանց ընդհատման, ինքնաշարժ մեքենայի մը պէս: Ոստայնանկ մը առտուընէ մինչեւ իրիկուն կաշխատի. առանց պէտք զգալու վայրկեան մը իսկ հանդիչելու: Եթէ երբեք քնանայ, ոչ մէկ բան կը խռովէ իր քունը. ո՛չ լոյսը, ո՛չ աղմուկը եւ ո՛չ ալ տեղին պատճառած անհանգստութիւնը ու իր պառկելու դիրքը: Բազմաթիւ Չինացիներ մշիկ մշիկ կը քնանան ձեռնասայլի մը մէջ, իրենց գլուխը ձուռ ինկած որ կարծես թէ մարմինէն պիտի անջատուի ընդհուպ: Ճանճերը կը պտտին իրենց արտեանունքներուն վրայ և նոյն իսկ իրենց բայ բերնին մէջ ու... չեն արթննար բընաւ որոշեալ ժամէն առաջ:

Մարմնական մարզանքները միշտ անթափանցելի գաղտնիք մը պիտի մնան Չինացիներուն համար: Չինացի մը ամբողջ տասերկու ժամ աւընդհատ գրելէ յետոյ՝ քիչ մը հանգիստ կառնէ անշարժ դիրք մը առած, եւ ամենէն զարմանալին սա է որ այդ ժամիկով Չինացիք գերազանցապէս քաջառողջ են:

Անոնք որ Չինի ու Ճաբոնի եւրոպական վաճառականութեան առջև բացուած նաւահանգիստները այցելած են, մեծամտօրէն կը հաստատեն թէ Չինացին և Ճաբոնցին իրարու կը նմանին,

միայն սա տարբերութեամբ թէ ճարտարներու հոտոտելիքը շատ զարգացած է, իսկ Ձինացիները գրեթէ բոլորովին զուրկ են այդ զգայարանքէն: Աւելին կայ. ճարտարները իրենց ժամանակին մեծագոյն մասը լողանալու կը նուիրեն, իսկ Ձինացիները գրեթէ բնաւ չեն լուացուիր:

Ձինացիին ճաշակելիքի զգայարանքն ալ չէ օժտուած. հարուստ դոտակարգերուն մէջ իսկ, աւմենայն անտարբերութեամբ կը ճաշակեն հոտած, աւրուած միսն ու ձուկը:

Գալով Ձինական բարոյականին, չինական դաստիարակութիւնը կեղծիքի վրայ հիմնուած է: Մարդ մը ո՛րքոն նենքաւոր ու խաբելու արուեստին մէջ ճարպիկ ըլլայ, ա՛լ աւելի կը յարգուի հոն: Ձինացին ուրախութեան ամենամեծ նշաններ ցոյց կուտայ ամէն անոնց, որոնք իր ողբացեալ մէկ մերձաւորին մահուան առթիւ ցաւակցութիւն կը յայտնեն:

Ծ Ի Ծ Ա Ղ

Լուի ԺԴ. իր պալատական խիստ գեղեցիկ օրիորդներէն մէկուն գաղտնի հարցուց. — Օրիորդ, ձեր սենեակը ուսկի՞ց կ'երթցուի:

Օրիորդը. — Եկեղեցիէն, Վեհափառ Տէր:

Տան մը մէջ

Կինը. — Ի՞նչ ունիս սիրելի ամուսինս, քեզ շատ տխուր կը տեսնեմ այս օրերս:

Այրը. — Որովհետեւ մեծ հոգ մը զիս կը նեղէ. 1000 ֆրանքէ վատ բան մը չը մնաց ձեռքս:

Կինը. — Ուրեմն յարգելի բարեկամս, նոյն գումարով ալ ինծի համար լաւ շրջազգեստ մը կրնաք պատրաստել տալ եւ այդ մեծ հոգէն ազատիլ:

Առաջնակարգ ստահակ մը հարցաքննութեան համար դատաւորին կը ներկայացուի:

Դատաւորը. — Ամուսնացած էք. կուզեմ գիտնալ:

— Ո՛հ, պարոն. արդեօք Պ. դատաւորը արժամագրելի աղջիկ մը ունի...

Դատապարտեալ մը կառափնատ տանելու համար բանտապահը կը ներկայանայ անոր ու կըսէ.

— Քաջ եղիր բարեկամս, ահա եկած է վայրկեանը ուր պիտի վճարես պարտքդ մարդկային ընկերութեան:

— Ուրեմն անակուծիւն կը հրատարակեմ այս վայրկեանիս:

Տիկին մը իր նախկին սպասուհին ճամբան տեսնելով կըսէ.

— Հոռոխ, կը յուսամ թէ հիմա աւելի շատ ամսականով կաշխատիս:

— Ձէ՛ տիկին, հիմա առանց ստակի կաշխատիմ կոր:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ... կարգուեցայ:

Մայր եւ որդի

— Մկրտիչ, եա՛վրում, արատա հեղ մը քեզի հայրիկդ կը ծեծէ նէ՛. քեզ սիրելուն համար է:

— Քա մայրիկ, հայրիկս քեզի կը սիրէ՞:

— Հէլպէի՛ կը սիրէ:

— Անանկ է նէ քեզի ինչո՞ւ չի ծեծեր:

Դատարանի մէջ

— Դուք ասկէց առաջ ալ 5 տարի բանտարկուած էք եղբր Կոլութեան մը համար:

— Բայց այս քաղաքին մէջ չէ՛, Պ. դատաւոր:

Երկու դրացուհիք

— Սա քովի կէնճին քաշածներն ալ շուները չեն քաշեր:

— Կէնէ ի՛նչ է եղեր:

— Ի՛նչ պիտի ըլլայ գիշերը քէօռ գինով էկելու տրեր կնիկը ծեծեր է:

— Քեզի բան մը ըսե՛մ. անոր ալ մուստահախ է. տահա չի կարգուած, կայ ալ նէ ան էր, չի կայ ալ նէ ան էր, ալ պատուաւեցաւ քի իլլէ ան ըլլայ տէյէ, չիյտէ՛ր խման ըլլալը:

— Ինտո՞ր չիյտեր, ամա իս առնէ նէ պէլքի վազ կուգայ ըսաւ:

— Վայ գլխո՛ւն, թող ան խելքովը ըլլայ. քա՛ անանկները մենէ վազ կանցնին, ֆախաթ ադ զըխըմ խմելիքէն վազ չեն անցնիր:

Отговорникъ Ж. ИВ. ЖЕКОВЪ
Печатница „Взаимность“ — Варна.

ԽՄԱՆ ԺԱՅՐԻԿԻՆ ԺԻՇՆ ՈՒ ԳԱՒԱԹԸ

Իրիկունը երբ գինետուն մտնեմ
«Կարսոն շիշա բեր, կը հրամայեմ».

Անուշ ճիւղէն բարեւելով
Թե՛ք մը ճնկեմ ես ախորժով.

Ու մէջէն ետքը խկոյն

Ծխախոտին տամ ողջոյն,

Ո՛րիկաւ ըբրանքս

Լեցնեմ երկրորդըս,

Ձը մոռնալով

Ձայնել տըղուն՝

Թաղէցընել

Մէջէն երբս:

Իսկ երկրորդ շիշէին

Բիշ մը ծանրը կը շարժիմ.

Յորեկուն հոգ ու վիշտ

Ալ մոռցած եմ ընդ միշտ:

Երբորդ շիշը որ կը բերուի իմ սեղան

Եղած եմ արդէն տէրը գինետան.

Տուն, որդի մոռցած, բանմը չգիտեմ

Ձի ճիշդ մէկ քիլօ օղի խմած եմ:

Թմրութիւն կուգայ վրաս տարածւի

Կուղեմ ես ընել քիշ մը սրգափի.

Սակայն գինետան, ան լակոտ մանչը

Բունըս խռովէ իր սուր ձայնովը.

Կը պարտաւորիմ վճարել մեկնիլ

Մէկ երկու քայլիս իյնալ ու կանգնիլ:

Մերթ կը շտապեմ, վաղելով երթամ

Մերթ ալ պատերու բարեներս տամ:

Շուքիս հետ խօսիմ գրպանս խառնեմ

Ինքնիրենս ես հաշիւներ կընեմ:

«Գօշօն աս գիշեր ինձ մատիկ ըրաւ

Երեք շիշէին տեղը չորս առաւ.

Վաղն իրիկուն խերն անիծեցի, հա՛,

Կուտ չեմ վճարեր եթէ ձեռքէս գայ:

Վա՛յ քեզի հիբիֆ, պանա մատիկ հէ՛

Բիլօսու ալիլէ կէլտի սէքիլէ.

Հէլպէթ եէմէք վարպու կէճէ էլտէ,

Օլմազսա պիլէ, է՛հ, որի՛ն հոգն է.

Աճապա շունտան երգ տրամ բէյնիր

Ալըպ կէթիւրսէմ օլո՛ւր, քիմ պիլիր:

Ասանկ խօսելով ես կը հասնիմ տուն,

Ուր զաւկներս արդէն կան ի քուն.

Անոնց մայրիկն ալ անկիւն մը կծկած

Մէկ երկու մրափ անշուշտ էր առած:

Առանց հանուելու կիյնամ անկողին

Ու առաւօտուն փողոց կը նետուիմ:

Ահա պարզեցի ձեզ այս իմ վիճակ,

Եթէ ալ ուր է, առէք օրինակ:

Ահա՛ ձեզի գաւաթիկըս ալ

Խնդրեմ այսպէս առէք դուք ալ.

Որ իր դիրքով պատկանելի

Մեծ շուք կուտայ իմ սեղանի.

Ու երբ գալի նա շրթունքին

Ախորժիկի համ տայ քիմքին:

Յոգնութիւններ տաժանագին

Անոր մէջը միշտ խնդրուին,

Իսկ երբ ասով թոքս ընենք

Ճի՛ն ճի՛ն անոյշ ձայն կը հանենք.

Որ մեզ աղէկ ախորժ կուտայ

Գոչել, վէ՛ր պէ՛ պիր թէք տահա:

Միայն խնդրեմ, որչափ ճնկէք,

Կուղէք նէ քէօր գինով եղէք,

Ուշագրութիւն ըրէք միշտ

Կոտրելով գոյն չղգաք վիշտ:

Այն ատեն կը ցնծաք

Երկուքի դրամ տաք.

Կոտրած սըրտով

Կ'ըսէք անոր

Գաղա օլտու

Ավֆ խտէրսին

Միւշթէրինիլ

Տուայիմա սէնին:

Ասկէց զատ, երբ

Գաւաթ փոխենք

Մեր բերնին համը

Շուտ փախցունենք:

Ուշագիր եւ ըզգոյշ

Կուլ տանք մենք միշտ անուշ.

Անով ահա մենք կը յաղթենք

Աշխարհի խերը շուտ կ'անիծենք.

Թէեւ շիտակը ըսելով, մենք

Մերին խերն է որ կ'անիծենք:

Ուրեմն խմանք թող խայտան, ցնծան,

Ընդունելով իմ այս փոքրիկ ընծան: